* * *

Այս մեր չարատանջ չարքաշ օրերում
Երբ մեր արեւը կապոյտ կամարում
Փայլում է աղօտ, զրկում մեզ լուսից,
Երբ մեր երկիրը քիրտ քռնութիւնից
Հազիւ շունչ քաշում, կեանքից զրկւում,
Դառն նզովքներ չար բախտին ուղղում,

Երբ մենք տեսնում ենք մեր կարմիր կեանքում
Ե'ւ խիղճ ե՛ւ պատիւ ոտնակոխ եղած,
Երբ մեր վաստակած ամեն մի քայլում
Մեզ մերժում են եւ մենք հալածուած
Լայն ծովը ընկած տաշեղի նման
Տարուբերւում ենք կեանքի զոռ կռւում,

Մեզ պէտք է միայն մի բան իմանալ
Նրան նուիրուել բոլոր ուժերով.
Դա սուրբ կռիւ է, որ կնճռոտ ճակտով
Մենք պէտք է մղենք միշտ եւ անդադար.

Այո՛, հայ եղբայր, այսօր մեր կեանքում
Գոլին է կարիք, մի պարտք սրբազան.
Թող կռուի բոցը վառուի մեր սրտում
Կռւումն է միայն փայլուն ապագան.

Թող այսուհետեւ սուրբ նշանաբան
Այս փոթորկոտ մեր անյոյս կեանքում
Լինի Մովսէսի «ակն ընդ ական»
Այս զօրեղ կոչը. կռուի լայն դաշտում.

Այո՛, հայ եղբայր, մեր կեանքը ցա՜ւ է
Էլ չտանջուենք, այսքանը բաւ է.
Մինչեւ ե՞րբ այսպէս վիշտ ու թախիծով
Ճամբենք օրերս մենք լալկան ոգով
Ջէնքը ձեռներիս ասպարէզ ելնենք
Եւ նրա գրկում իբրեւ հայ մեռնենք.

Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆ